

### ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆՍԱՆՇՐՋԱՆԸ.**— Սույն թվականի օգոստոսի 31-ին և սեպտեմբերի 1-ին տեղի ունեցավ Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի սեսիան: Սեսիան բաշեց Գերագույն Սովետի նախագահ Ս. Սահակյանը:

Ռեսպուբլիկայի դերագույն մարմինը քննություն առավ Սովետական Հայաստանի 1953 թվականի Պետական բյուջեի և 1952 թվականի բյուջեի փատարումը, որի մասին ղեկուցեց ֆինանսների մշնխտարի տեղակալ Ռ. Բադալյանը, Այդ հարցի առթիվ լսվեց նաև Գերագույն Սովետի բյուջետային հանձնաժողովի հարակից ղեկուցումը: Ելույթ ունեցող ղեկավարածները մի շարք առաջարկություններ արեցին բյուջեի նախադժի վերաբերյալ: Հաշվի առնելով բոլոր դիտողություններն ու առաջարկությունները, Գերագույն Սովետը Հայաստանի 1953 թվականի Պետական բյուջեի հաստատեց եկամուտների գծով մեկ միլիարդ 213 միլիոն 924 հազար, փակ ծախսերի գծով՝ մեկ միլիարդ 209 միլիոն 54 հազար ուսրլի գումարով:

Ուշագրավ են սոցիալ-կուլտուրական կարիքների համար հատկացվող միջոցները: Բյուջեի ծախսային մասի գումարոց մոտ 485 միլիոն ուսրլի հատկացվում է ժողովրդական կրթության, կուլտուրայի, արվեստի և գիտության զարգացմանը, մոտ 178 միլիոն ուսրլի առողջապահությանը, 62 միլիոն ուսրլի սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրությանը:

Այնուհետև սեսիան հաստատեց Գերագույն Սովետի նախագահության հրամանագրերը, որոնք ընդունվել էին նախորդ սեսիայից հետո:

**ՌՈՒՄ ՄԵՆ ԳՐՈՂ Լ. Ն. ՏՈՒՍՏՈՅԻ ՄԵՆԱՐՈՒՄԸ.**— Սույն թվականի սեպտեմբերի 9-ին լրացավ ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 125-ամյակը: Սովետական Միության բազմազգ ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը լավորեն նշեց այդ նշանակալի տարեթիվը: Երևանում, Լենինականում, Կիրովականում և Ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում տեղի ունեցան նախնաներ, դասախոսություններ, կազմակերպվեցին ցուցահանդեսներ՝ նվերոված համաշխարհային գրականության ականավոր ներկայացուցչի կյանքին և գրական գործունեությանը:

Սեպտեմբերի 9-ին Երևանում տեղի ունեցավ հորեկյանական հանդիսավոր երեկո, որը բացեց գրող Ս. Զորյանը: Լ. Ն. Տոլստոյի մասին ընդարձակ ղեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական դիտությունների թեկնածու գրականագետ Հ. Սալախյանը:

Լ. Տոլստոյը հայ բնթերցողի սիրելի գրողներից մեկն է: Նրա առանձին պատմվածքները հայերեն թարգմանվել և հրատարակվել են դեռ անցյալ դարի 80-ական թվականներին: Հոշակավոր գրողի երկերի թարգմանությանը գրողվել են Պ. Պառլյանը, Ղ. Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Գ. Սունդուկյանը, Ալ. Մատուրյանը, Ե. Օտյանը, Ս. Զորյանը և ուրիշներ: Նախասկյուրցիան շրջանում Լ. Տոլստոյի երկերը հա-

յերեն լեզվով լույս են տեսել Թբիլիսիում, Մոսկվայում, Ալեքսանդրոպոլում (այժմ Լենինական), էյմիուծնում, Կոստանդնուպոլում, Քարվրդում:

Սովետական Հայաստանում Լ. Տոլստոյի առանձին աշխատությունները հրատարակվել են ավելի քան 40 անգամ՝ մոտ կես միլիոն ընդհանուր տպաքանակով: Այդ շրջանում լրիվ թարգմանվել և հրատարակվել են նրա բոլոր լավագույն գործերը, որոնց թվում «Պատերազմ և փառալուծություն», «Աննա Կարենինա» և այլն: 1948—1950 թվականներին լույս տեսավ Լ. Տոլստոյի ընտիր երկերի 10-հատորյակը:

**ԳՐՈՂ Մ. ԱՐԱՋՈՒ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ.**— Սեպտեմբերի 17-ին լրացավ գրող Արազու (Մովսես Հարությունյան) ծննդյան 75-ամյակը: Արազին փր գրական գործունեությունը սկսել է 1906 թվականին: Նա ճեղքնալ է սոցիալիստական պատմվածքների և Սովետական Հայաստանի վերելքը պատկերող մի շարք մեծածավալ գործերի:

Հորեկյանի առթիվ Սովետական Հայաստանի գրողների տանը կայացավ հանդիսավոր երեկո, Գրողի ու շրջանների հասարակական կազմակերպությունների, արվեստի և գրականության աշխատողների, Հորեկյանի անունով ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր: Մոսկվայի, Ուլրախյայի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելոռուսիայի, Մերձբայթյան երկրների, Մոլդավիայի և այլ ռեսպուբլիկաների գրական կազմակերպություններից:

**ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ.**— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արշավախումբը պատմաբան Ք. Առաքելյանի ղեկավարությամբ վերականգնեց Գրանդի պեղումն աշխատանքները: Անցյալ տարիներում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին ամբողջ շրջափակող վիթխարի պարսպի մնացորդները: Այս տարի արշավախումբը պեղման աշխատանքները կենտրոնացրել է ամբողջ ներսում՝ նպատակ ունենալով երևան հանել ընակելի և այլ կառուցվածքների բեկորները: Պեղման աշխատանքներին մասնակցում են Լենինգրադի էթնոտաժի (Պատմության թանգարանի) գիտական աշխատողները:

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիտոբովսկու գլխավորությամբ շարունակվում են նաև Երևանից ոչ հեռու, Կարմիր բլուրի մոտ Ուրարտական շրջանի ամբողջ պեղումները:

Վերջերս այստեղ էր ժամանել Լենինգրադի գիտապոսույար կինոնկարներ արտադրող ձեռնարկության արշավախումբը, որը նկարահանումներ կատարեց պեղումների վայրում: Լենինգրադի էթնոտաժի պատվերով այդ ձեռնարկությունը ներկայումս պատրաստում է «Ուրարտական պատմությունը» դոկումտար կինոնկարը: Ինչպես նաև հայտնաբերված բազմաթիվ նմուշներ, որոնք վկայում են Սովետական Միության տերիտորիայում գտնվող հնագույն պատմության զարգացած կուլտուրայի մասին:

**ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**— Վերջերս Բասարզեչարի շրջկենտրոնի մոտիկ մի հողամասը վարելիս բացվեց հնագիտութիւն համար արժեքազոր մի դամբարան:

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի գիտական արշավախմբի կողմից կատարված պեղումներից պարզվեց, որ կիսով լայի ավերված այդ դամբարանի հնութիւնը հասնում է մինչև 6-րդ դար մեր թվագրութիւնից առաջ: Այնտեղ թաղվել է 11 մարդ կրած դրութիւնով: Կենտրոնում, հատուկ պատրաստած տասպանի վրա դրված է մի երկարազանգ կմախք: Զափազանց հետաքրքիր և արժեքավոր են նրա անմիջական շրջապատում գտնված թաղամթիվ իրերը: Այդ իրերի թվում են բրոնզե նախշուն պատյանի մեջ դրված երկու երկաթե դաշույն, նիզակի ծայրի, երեք դանակ, թևերի սուկորների վրա եղած մի քանի բրոնզե սպարանջան: Ամբողջ դամբարանից համարվեց 30 մատանի, օղ և սպարանջան, որոնցից մեծ մասը քանդակագործ է:

Կմախքի գանգի մաս գտնվեց բրոնզե նուրբ փորագրութիւնով շորս խողովակ, որոնցով սգերեզմանատեք» առաջնորդը զարդարել է իր վարսերը և զուխարիը:

Գտնված առարկաներից ամենաուշագրավոր մասն է մետր երկարութիւն և 13 սանտիմետր լայնութիւն ունեցող բրոնզե գոտին է, որը զարդարված է թունուներով, օձերի, երեսկայական կենդանիների, երկնային լուսավորների նկարներով և այլ քանդակներով:

Գտնվեց նաև վարզաի մշակված ժանիք, հենց իր կրծքի սակորների մաս, որով, սովորութեան համաձայն, իրավունք ունեն զարդարվելու միայն տվյալ զազանիկն սպանողը:

Գամբարանում միաժամանակ գտնվեցին մեծ քանակութիւնով ուլունքներ, ձիու գանգ և ոչխարի ոտքերի վերջավորութիւններ:

Այս և նման այլ դամբարանների գիտական հետազոտութիւնները ջուրջ են տալիս, որ 2.600—3.000 տարի առաջ Հայաստանում գոյութիւն են ունեցել ստրուկներ և սարկատներ: Այդ ժամանակաշրջանում ունեցվածքից և բոլոր իրավունքներից զրկված մարդիկ, ինչպես և կենդանիներ, խմբերով զտարեթիվ են իրենց սեւերի համար: Հենց այդ են սպագոցում հիշյալ դամբարանում հայտնաբերված մարդկանց և կենդանիների սակորները և նյութական կուլտուրայի մնացորդները:

**ՆՐՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԿՐԸ-ԲԱԳՈՅՑԵ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.**— Սեպտեմբերի սկզբներին Սովետական Հայաստանի Կուլտուրայի մինիստրութիւնում հանրագումարի բերվեցին սեպագրիկայի բարձրագույն ուսումնական հաստատութիւններում կատարված 1953—1954 ուսումնական տարվա ընդունելութիւնների արդյունքները:

Այդ արդյունքները պերճախոս կերպով վկայում են, թէ որքան մեծ է երիտասարդութեան ճգտումը դեպի բարձրագույն կրթութիւնը: Ռեսպուբլիկայի բոլոր 12

ստացիոնար բարձրագույն ուսումնական հաստատութիւններում սովորելու համար դիմումներ էին ներկայացրել ավելի քան 11.000 հոգի: Գիմումներ էին ստացվել ինչպես Հայաստանի բոլոր շրջաններից, արևելս էլ Վրաստանից, Ազրբեջանից և Սովետական Միութեան այլ վայրերից: Սերանի Պետական համալսարանում, Բժշկական և Պոլիտեխնիկական ինստիտուտներում չուրաքանչիւր տեղի համար ստացվել էին 5—6 դիմումներ:

Գիմում տվողների ընդհանուր թվից բոլոր տեսակի բարձրագույն ուսումնական հաստատութիւններում ընդունվել են 3.030 հոգի:

**ՄԱՅՄՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱՐՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17-ՐԳ ԴԱՐՈՒՄ.** ՓԱՍՏԱՔՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիան հրատարակել է «Հայ-սովետական հարաբերութիւններ 17-րդ դարում» փաստաթղթերի ժողովածուն (նուսերեն): Ժողովածուում զետեղված են Հին արեւերի պետական կենտրոնական արխիվի փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայ-սովետական տեսնական-բաղարական և կուլտուրական հարաբերութիւններին:

Ժողովածուն նյութեր է պարունակում նաև սուպարսկական, սուս-թուրքական, սուս-վրացական և սուս-ազրբեջանական հարաբերութիւնների վերաբերյալ:

Ժողովածուն կազմել են պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը, դոց. Վ. Կ. Մականյանը, Ս. Ա. Տեր-Ավակիմովան:

**ՆՐԱԿԱՆ ԿԻՆՈՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**— Կեդրոնական և խրոնիկալ ֆիլմերի նրանի կինոստուդիան սկսել է «Հայաստանի ճանապարհներով» կերպ մասին քաղկացած կինոսերիալի նկարահանումը: Ավետարկը, որի սցենարի (կինոգրվածքի) հեղինակներն են Լ. Ղարաբաղյանը և Լ. Բաշալյանը, նպատակ ունի ցույց տալ Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը և նրա բնութիւնը:

Արտադրութեան է հանձնվել կերպ այլ կինոսերիալի գրանցից մեկը՝ «Հայաստանի անտառները» (սցենարը Վ. Հակոբյանի և Ս. Մնացականյանի), նմիովմ է սեպագրիկայի անտառային հարստութիւնների ցուցադրմանը և անտառային սեպագրութեան գարգացմանը: Մյուս սերիալը՝ «Լեռնային արոտավայրերում» (սցենարը Մ. Օվչինիկովի), նվրվում է Հայաստանի անտառային հարստութիւններին:

Սերանի կինոստուդիան սկսել է նաև «Հայաստանի արվեստի վարպետների կինոհամերգը» նոր ֆիլմի արտադրութիւնը: Այդ գունավոր կինոնկարը կարտացոյի Հայաստանի երաժշտական արվեստի հարստութիւնները:

Կինոհամերգին կմասնակցեն Արեքանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի սոլիստները և երաժշտական կատարողական լուսնական կոլեկտիվները:

Կինոհամերգի սցենարիան գրել են Ա. Գուլակյանը և Ա. Կեդրոնյանը: Ֆիլմի բեմադրող սեպագրիներն են

Գ. Մելիք-Ավագյանը և Գ. Սարգսիսովը, օպերատորները՝ Ս. Գեորգյանը և Ն. Սիմոնյանը:

Վերահիշելի կինոնկարներն ու կինոհամերգը կցուցադրվեն մինչև այս տարվա վերջը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ԵՆԵՔԻ ԿԱՌՈՒՅՑՈՒՄԸ.**— Երևանում, քաղաքի նորահասուցի, գեղեցիկ փողոցներից մեկում, որը կրում է հայ ակադեմիկոս զորավար Բաղրամյանի անունը, կառուցվում է Սովետական Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նոր շենքը: Երևարությունը դրավում է մոտ հինգ հեկտար տարածություն: Ընթացիկ տարում կառուցման աշխատանքները զգալի չափով առաջ տարվեցին: Ենթի երկրորդ հարկի կառուցումն արդեն ավարտված է և սկսված է երրորդ հարկի կառուցումը: Ենթի գլխավոր ճակատն ամբողջովին կրկնապատվում է Բյուրականի մոզ վարչազույն տուֆով, որն առաջին անգամ է գործածվում շինարարության մեջ:

Հայկական ճարտարապետության սճով կառուցվող այս շենքը, որի ընդհանուր ծավալը հավասար է Լենինո 40.000 խորանարդ մետրի, նախագծել է ՍՍՏՄ Ճարտարապետական ակադեմիայի իսկական անդամ Ս. Սաֆարյանը: Նորակառույց շենքում տեղավորվելու են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահությունը, նրա բաժանմունքները և գիտական հարուստ գրադարանը:

**ԵՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ.**— Օրեցօր բարեկարգվում և առֆայտապատվում են ռեսպուբլիկայի երկրորդ խոշոր քաղաքի սոցիալական ու փողոցները: Միայն վերջին տարիներին առֆայտապատվել է և առհաստակվել է 500.000 քառակուսի մետր տարածություն:

Վերջին տարիներին ստեղծված հինգ նոր բանվորական ավաններում կառուցվել է 2.800 բնակելի շենք, դպրոցներ, կուլտուր-լուսավորական, առողջապահական հիմնարկներ:

Ամեն տարի շինարարական ու բարեկարգման հրահայտյան աշխատանքներ են կատարվում քաղաքում: Միայն այս տարի այդ նպատակի համար հատկացվելու է ավելի քան 16.000.000 ռուբլի:

Վերջերս փայտամաններից ազատվեցին Տեքստիլ կոմբինատի բնակելի շենքերը: Լենինի լայնահաստ պողոտայի վրա կառուցվում է գուլպա-տրիկոտաժի գործարանի բանվորական հանրակացարանի հսկա շենքը, կալինինի փողոցի վրա՝ եռահարկ բնակելի մի նոր շենք:

Լայն ծավալ է ստացել անհատական բնակարանա-

յին շինարարությունը: Այս տարի պետությունը աշխատավորությանը բաց է թողել մեկ ու կես միլիոն տուրու վարկ՝ անհատական բնակարաններ կառուցելու համար:

Նախկինում Լենինականը խիստ ծառազուրկ և անհրապույր է եղել: Սակայն ներկայումս կանաչապատվել է ամբողջ շրջապատը: միայն այս տարվա գարնանը փողոցներում, պուրակներում և զբոսավայրերում տնկվել է 120.000 ծառ ու թուփ:

Գնալով փոխվում, բարեկարգվում, աճում ու գեղեցկանում է, ավելի կուլտուրային տեսք է բնդունում Լենինականը:

**ԵՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՐԶԱՆՈՒՄ.**— Երևանից մի քանի կիլոմետր արևմուտք, Աշտարակ տանող ճանապարհի երկու կողմերում փռված է մեր ռեսպուբլիկայի ծաղկուն շրջկենտրոններից մեկը՝ Եահումյանի ավանը:

Երբեմնի «դեբր» վրա հիմնված այդ ավանը բնդամենը 14—15 տարվա պատմություն ունի: Չնայած այդ կարճ ժամանակամիջոցին այստեղ ստեղծվել են մետաքսագործվածքային ֆաբրիկաներ, տեղական արդյունաբերության, գուլպա-տրիկոտաժների կոմբինատ և այլ ձևանարկություններ: Վերջերս շարք մտավ հինգերորդ հնգամյախի նորակառուցներից մեկը՝ մետաքսագործվածքային երկրորդ խոշոր ֆաբրիկան, որը տարեկան երկրին կտա երկու միլիոն մետրից ավելի արտադրանք:

Մեծ աշխատանք է կատարվել կոմունալ և բնակարանային շինարարության ուղղությամբ: Վերջին հինգ տարում իրենց խնայողություններով ու պետական վարկով շրջկենտրոնի բնակիչները կառուցել են մոտ 1.000 անհատական տուն: Միայն այս տարի նրանց տրվել է երկու միլիոն ռուբլի վարկ:

Եահումյանի անվան ավանում ստեղծվել են կուլտուր-լուսավորական, առողջապահական բազմաթիվ հիմնարկներ: Միջնակարգ և բանվոր երիտասարդության երեք դպրոցում սովորում է մոտ 2.500 աշակերտ: Կուլտուրայի տունը, երեք ակումբները, ստացիոնար կինոները, ավանային մասսայական ու մանկական գրադարանները դարձել են աշխատավորների հանգրստի և ուրախ ժամանցի սիրված վայրեր:

Վերջին տարիներում այստեղ կառուցվել են հիվանդանոց, ծննդատուն, մանկական կլինիկա, սանիտարական-էպիդեմիոլոգիական կայան, դեղատուն, մանկապարտեզներ, մանկամսուրներ:

Օր-օրի վրա բարեկարգվում է Եահումյանի ավանը:

